ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ՊԱՏԿԵՐԻ ՀԱՏՈՒՈՂ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԷՊՈՒՄ ԵՒ ԱՍՔՈՒՄ

Խղճի խոստովանութիւն, ճակատագիր, թէ պարզապէս սիրավէպ

Մարդու էութեան ամենախորքային բացայայտումների նպատակադրմամբ պէտք է բացել հայ ժամանակակից եզակի կին արձակագիրներից Մարգարիտ Տէրանցի «Սէր լուսնեզրին» վէպը։ Հեղինակի գրիչը պրպտում է մարդկային ճակատագրերի լուսանցքներում, ձեւաւորում ինքնուրոյն մտածողութիւն եւ հաղորդում հետաքրքիր կառուցւածքային բովանդակութիւն։ Արձակագիրը չի վախենում երեւոյթների մեծութիւնից, դրանց ներկայացնելու ինքնատիպ կարողութիւնն իսկապէս իր գրականութեան կարեւոր հիմնասիւներից է։ Մարգարիտ Տէրանցն իր արձակի համար կարեւորում է ժամանակը, իրավիճակը եւ խորութիւնը։ Հէնց այս երեք նախապայմանով էլ հեղինակի գրականութիւնն ընթերցողի համար դառնում է գրաւիչ, ինքնաբուխ եւ կլանող։

Արձակագիրն ունի գրական ճանապարհի քարտէզ, հիւսած գրական կենսագրութիւն՝ հեղինակային այլ գրքերով։ Սա գալիս է փաստելու, որ Մարգարիտ Տէրանցն անընդհատ գրական տեղաշարժերի մէջ է, փնտռում ու գտնում է կարեւոր եւ առանցքային թեմաները, որոնք կարեւոր լինելով հանդերձ նաեւ համոզիչ օրինակներ են մարդու համար։

«Սէր լուսնեզրին» վէպը կեանքի քառակուսու մէջ է հաւաքում երջանիկ կրակներին, արուեստի դեւերին, այն մահը, որին փափաքեց հեղինակը, սակայն մահն իրեն հետապնդեց եւ անցեալի չարագոյժ տեսիլքը, որը խմորւում է բազմաշերտ ասելիքով։

Վէպը քառասնամեայ գրող կնոջ կեանքի մասին է, որը ոչ թէ սիրային ընդգրկում ունի, այլ հոգեբանական լայն շերտեր։ Արձակագիրը սոսկ սիրային պատմութիւն չի ներկայացնում, այլ իր ձեռագրին յատուկ կտրուկ շեշտադրումներով է ձեւաւորում արձակը՝ թոյլ տալով ընթերցողին կեանքի ոլորապտոյտ ճանապարհին ճիշդ ընտրութիւններ կատարել, ինքնադիտարկել սեփական քայլերն ու ինչու ոչ՝ հոգին։

Ինչպէս վերեւում նշեցինք, ժամանակն ինքնին կարեւոր դեր ունի Մարգարիտ Տէրանցի արձակում։ Պատահական ընտրուած չէ վէպի հերոսուհու ապրած ժամանակաշրջանը՝ Խորհրդային Միութեան քայքայման եւ դրան հետեւող երեւոյթների ամբողջութիւնը, որը տարածք է ստեղծում հեղինակի համար՝ նոր բացայայտումներ անելու, կերպարը բնական եւ ամբողջական պատկերելու համար։

Սէրը, այո՛, միշտ կայ նրա արձակում, բայց «Սէր լուսնեզրին» վէպում նա ոչ թէ սէրն է առաջ բերում, այլ կնոջ պատմութիւնը, գենետիկ կոդի փնտռտուքը եւ կեանքը պատկերում է այնպէս, ինչպէս այն կայ։ Ժամանակակից մարդը, ի հարկէ սիրոյ տարբեր դրսեւորումներ ունի, բայց ահա հեղինակը փորձում է այդ ամէնը այլ քօղի տակ միաւորելով ներկայացնել, արդիւնքում ստանալով ինքնատիպ եւ պատկերաւոր արձակ, խիտ հիւսուած ու տողատակերի կայուն ասելիքով։ Սա բոլորին չէ յատուկ, եւ

անգամ ընթերցողը պէտք է գիտակցի, որ Մարգարիտ Տէրանցի այս վէպի մէկ էջի տակ թաքնուած են եւս երեք էջ՝ աւելի կարեւոր ասելիքով ու բովանդակութեամբ։

Համամարդկային արժեհամակարգային խնդիրները հեղինակի վէպում ակնառու է։ Սակայն դրանով ոչ թէ հիասթափեցնում է մարդուն, այլ նոր ուժ որոնում՝ ինքնաբացայայտուելու, յաղթահարելու, կեանքը նորովի ընկալելու համար։

Անհատ ու ազգ իրական կապը դժուար է ներկայացնել։ Առաւել եւս դժուար է դրա խորքային՝ մարդ-հայրենիք կապի մասին բացէ-ի բաց խօսելը։

«Եթէ կարողանանք օգտագործել մեր էութեան մէջ դրուած աստուածային յայտնատեսութեան անհշան մասն անգամ, այլ կեանք կ'ունենանք»[1]։

Գրականութիւնը սիրում է գրողի անկեղծութիւնը, եթէ այն փաստարկուած է։ Այս առումով իւրայատուկ է Մարգարիտ Տէրանցի վէպը, որը հոգեբանական շերտերի խտացում է եւ ասելիքով բազմաբովանդակ։ Սրան զուգահեռ վէպում ընթացող գործողութիւնները փիլիսոփայական դատողութիւններ ունեն, որոնք նաեւ շեշտադրում են մարդու անձնականութեան կարեւոր բաղադրիչները։ Այնպէս չէ, որ հեղինակը փորձում է այդ անձնականութեան որակների մէջ խորանալ եւ մանրամասնօրէն ներկայացնել, ինչն աւելի շատ կը ձանձրացնէր։ Այլ փորձում է իրական փոփոխութիւն անել գրական հերոսի անձնականութեան դաշտում, այն դարձնելով կոփուած, նպատակաուղղուած։

Առաջին հայեացքից սիրավէպ թուացող «Սէր լուսնեզրին» գնալով բացայայտում է իր հերոսը, տալիս կոնկրէտ պատասխաններ՝ ինչո՞ւ կայ սէրը եւ ինչերի է պատրաստ։ Գրական կին հերոսը միւս հերոսին լրացնելով նոր հորիզոն են բացում, եւ հեղինակը սկզբնակէտից էլ դասական սիրավէպի ժանրում չի ձեւաւորում իր արձակը, որովհետեւ դասականութիւնը կարող է խանգարել այն ասելիքին, ինչը հէնց Մարգարիտ Տէրանցի մատնանշածն է։

Մենք շատ զուգահեռներ կարող ենք անցկացնել հեղինակի նախորդ ստեղծագործութիւնների հետ, հիմնականում թեմատիկ որոշ շերտերի խտացմամբ, բայց այս վէպում զգացւում է ասելիքի թարմութիւնը, խնդիրների պարզ ներկայացումը, հոգեբանական եւ մշակութային տուայտանքը։

«Հեղինակի կերտած կերպարների յուզառատութիւնն, էմոցիոնալ զեղումները սենտիմենտալիստական չեն. գրական միտումներ, որ առկայ են յատկապէս կին գրողների գործերում (Ժորժ Սանդ, Սրբուհի Տիւսաբ)։ Մարգարիտ Տէրանցի գրչին աւելի յատուկ է ինտելեկտուալիզացուած - անալիտիկ սենտիմենտը, որը բնորոշ է Ֆրանսուազ Սագանի գրական մեթոդին։ Պէտք է ասել, որ Մարգարիտի կողմից ապրումների, հոգեվիճակների, ծայրայեղ զգացողութիւնների այդ սպեկտրալ անալիզը կարող է դեռ նոր, հետաքրքիր բացայայտումներ անել իր հերոսների ներաշխարհում։ Տէրանցի կին հերոսները ուժեղ կերպարներ են, ոգով ուժեղ, թուլութեամբ՝ ուժեղ, միայնակութեան մէջ՝ կատարեալ»,- բ.գ.թ., գրականագէտ, հոգեբոյժ Վարդգէս Դաւթեանը ժամանակին գրել է Մարգարիտ Տէրանցի «Սէր եւ էմիգրացիա» գրքի մասին, որը կարծես արտացոլում է ընդհանուր Տէրանցի գրական հերոսներին, նրանց ապրած կեանքն ու հոգեվիճակները։ Եւ պատահական չէ, որ հեղինակը գնալով առատապէս իր բծախնդրութիւնն է դնում իրավիճակների հիմքում, սակայն հերոսների կատարած քայլերի

[1] **Մ. Տէրանց**, Սէր լուսնեզրին, Անտարես, Երեւան, 2021, էջ 7։

արդիւնքում ցոյց տալիս այդ ամէնն ու բացում նոր տիրոյթ, որտեղ ներկայ են կեանքի ու յիշողութեան, ապրելու եւ պայքարելու ազդակները։

Օտար ու հարազատ զգացումների կողքին արձակագիրը վարպետօրէն կարեւորը զատում է երկրորդականից, առաւել կարեւոր բաների մասին խօսելիս իրեն յատուկ ձեւակերպումներով հարստացնում տողը՝ ինքնութեան դաշտում պահելով սեփականը, ազգայինն ու ապրուածը։

Վիպական հիւսուածքն առանձնանում է անցեալի ու ներկայի համադրմամբ՝ անշեղօրէն կապելով մարդկանց յոյզերն ու սպասումները։ Դրանց հետ մեկտեղ մարդկային յարաբերութիւնների խնդիրն է գլուխ բարձրացնում՝ ֆիզիոլոգիապէս ներդաշնակ մանրամասներով։ Մարգարիտ Տէրանցը գտել է բանալին՝ կին եւ տղամարդ յարաբերութիւնների ճշգրիտ ներկայացման, սեփական սկզբունքներն առաջ բերելով եւ դրանք գրական ստեղծագործութեան մէջ գործնականօրէն կիրառելով։

«Մեր «ես»-ը կազմաւորւում է ամենախոր ապրուած զգացմունքներով։ Յաճախ՝ հէնց դրանք են մեր շղթաները»[2]։

Վէպի հիմնանիւթը կարեւոր ստեղծարարութեան է ենթարկուել, որը ապահովում է գրական գործի շնչառութիւնը՝ սկզբնամասից մինչեւ աւարտակէտ։ Պէտք է նշել, որ այդ ընթացքը ինչ-որ չափով որոշակիանում է՝ ժամանակակից աշխարհի լուծումներով, խոչընդոտներին հակադարձելու եւ սեփական մտքերը պատմելու համարձակութեամբ։

Հեղինակն իր տողերին խորհրդաւորութիւն է հաղորդում՝ զգացմունքների դիտարկմամբ եւ դրանց կիառմամբ։ Կեանքի, սիրոյ, տառապանքի ու մի շարք այլ հարցեր են վէպի հիմքում, որոնք քայլ առ քայլ բացայայտում են ինչպէս կերպարներին, այնպէս էլ նրանց փիլիսոփայութիւնն ու մտածողութիւնը։ Եւ դրա շնորհիւ է, որ իր վէպի հերոսները նշաձող են սահմանում ու փորձում դրանց հասնել՝ թէկուզ դժուար, բայց իմաստային ուղիներով։ Այդ ուղիներից մէկը հայրենիք է տանում, ծրարւում է բառը՝ կարօտի եւ սիրոյ եզրին թողնելով կեանքի հայեացքը՝ մե՛րթ երեւացող, մե՛րթ՝ ցաւից խեղճացած։ Բայց ահա արմատներն այնքան ամուր են, որ հողեղէն տառապանքներից կարող ես մենանալ հեղինակի ստեղծած այն տարածութիւնում, որն այս դէպքում երկինքն է, ասել է թէ՝ անհունութիւնը։

«Թէկուզ արմատներդ հասել են մինչեւ դժոխք, դու կարող ես սաղարթներդ մխրճել Երկինք։ Սովորաբար, Երկինք են տեսնում նրանք, ովքեր ապրել են դժոխքի ցաւը...»[3]։

Վէպի վերջաբանում «ռումբերի պայթիւններ յիշեցնող յամառ հեռախօսազանգերը» կարծես մարգարէական կանխատեսում լինէր սպասուելիք պատերազմի մասին, որ ունենում են ճշմարիտ գրողները (Վէպը հրատարակութեան է յանձնուել 2020 թուականի Մայիսին, իսկ պատերազմը սկսուել է Սեպտեմբերի 27-ին)։

Անխօս, արձակի երկրում դժուարութիւնները շատ են, նաեւ դիւրին չէ համարձակ գործելը։ Մարգարիտ Տէրանցը կոտրում է մի շարք կարծրատիպեր, որոնք յաճախ վերագրում են արձակագիրներին։ Նա իր խօսքով, տարբերուող ոճով, լեզուով, բառամթերքով կայուն եւ մնայուն արձակ է ստեղծում՝ խօսելով կարեւորի մասին եւ չսահմանափակուելով թեմատիկ ընտրութեան հնարաւորութիւններից։

---

[2] Նոյն տեղում, էջ 113:

[3] Նոյն տեղում, էջ 171:

Ինքնութեան փաստը՝ տողի հաստատումով

Տողը վարակիչ յատկութիւն ունի, քանի որ այն մեծ ու խորհրդանշական տարբերութիւններ է դնում իրականի ու անիրականի, ասելիքով ու անելիքով լցուած ներկայի ու անկանխատեսելի ապագայի մէջ։ Անկաշկանդ ու զգայուն տողը թոյլ է տալիս նաեւ նոր եզրայանգումներ անել։ Անկասկած, Վարդան Յակոբեանի ստեղծած գրականութիւնը, այսպէս ասած, մարդու երակներից շատ երակներ ունի եւ զարկերակի առումով ամենաուժեղն է բաբախում։ Երբ ասելիքն է ստեղծում անորսալի տառերի չափն ու քանակը, ապա ստեղծագործութեան կատարելութեան աստիճանը պարզ է դառնում այն ընթերցելու առաջին վայրկեանների ընթացքում։

Խօսելով «Քրիստոսի ծաղիկները»[4] ասքի մասին, կարելի է միանգամից ասել, որ ամէն ինչ հարթ է՝ սկզբից մինչեւ վերջ, որովհետեւ գրողը բացարձակ անկեղծութիւն է ներդրել իր ասքի մէջ։ Վարդան Յակոբեանն իր ասքը նուիրել է Արցախեան համահայկական շարժման 30-ամեակին, մեր հերոսական գոյամարտի սուրբ նահատակներին եւ սրբազան պայքարում զոհուած իր՝ հեղինակի, անմոռաց զինակիցներին։

Առանձին հատուածներում զգում ենք, որ ինչքան էլ ցաւը խեղդում է գրիչը, մէկ է՝ գրողը դեղահաբի փոխարէն իր սրտի թեթեւութիւնը ամէն կերպ ջանում է փոխանցել մտքին, որպէսզի ընթերցողը այն ծանրութիւնն այնպէս չզգայ, ինչպէս իրականում կայ։ Բայց ինչքան էլ ցանկանում ես շրջանցել, չի ստացւում։ Այն ճիշդ այնպէս գալիս ու կանգնում է մտքիդ ծալքերում՝ որպէս անցեալի ու ապրածդ այժմեան կեանքի չսպիացող պահ, նկարագիր, ցաւ ու ուրախութիւն։ Այո՛, չսպիացող ուրախութիւն նոյնպէս լինում է, քանզի ամէն անգամ չէ, որ մենք իրերն իրենց անուններով ենք կոչում, ու յաճախ պատահում է, որ չենք զգում մեր սխալը, բայց մէկ է, անում ենք այն, ինչ մեզ ուրախութիւն կը պատճառի։ Վ. Յակոբեանը թողնում է, որ ընթերցողը գնայ երազափայլ մտորումների գիրկը, բայց ապրի կեանքի ուրախութիւնը՝ ընկերների ու հայրենիքի սէրը։

Ձեռքս բաց չթողնես, որ այն շարունակի ուսումը կայանալու:
Երազը-ահա մեր առաջին հանդիպման վայրը:
Երազը-ահա մեր ժամադրավայրը վերջին:
Իսկ դրախտավայրը կայանում է միայն կորսուելուց յետոյ[5]:

Պատկերներ ստեղծելը գրողի համար կարեւոր նշանակութիւն ունի այս պարագայում։ Ընթերցելով տողը՝ մենք տեսնում ենք երազի գեղեցկութիւնը, թէ այն ինչերի է ընդունակ եւ ինչքան գաղտնիքներ ունի իր մէջ։

Այժմ պահն է խօսելու սրբավայր երկրի մասին, որին քառատում են, սպանում, կոտրում, բայց որը միշտ վերածնւում է, ծաղկում ծաղկի պէս ու երազում նոր օրուայ բարեկեցութեան մասին։

Ահա՛ մի հատուած ասքի այն մասից, որը հեղինակը վերնագրել է «Երկիր սրբավայր».

Խոտերի ծայրին երազների երկինքը
քայլում է այնպէ՛ս,
որ ոչ մի ծաղիկ չի ճկւում և չի թեքուելո՛ւ,

---

[4] **Վ. Յակոբեան**, Ընտրանի, Անտարես, Երեւան 2017, էջ 291-379:

[5] Նոյն տեղում, էջ 291:

քանի դեռ սուրսայր բեղիկները խոփի կամ հասկի
չեն դիպչում ամպերին,
որոնք պայթում են փուչիկների պէս ուռճացած օրուայ
և փեղկը պալիս յորդ պեղումների:

Անձրեւաթանձր մառախուղների եթեւում
ճերմակամորուս ասպուածներն՝ անընդհատ
մոլորումների մէջ,
ափեափ են նետում իրենց.
չէ՞ որ մի վայրկեանում (իմ, քո, նրա ձեռքերով)
հազար ու մի ճակատագիր են փոխում երկրում[6]:

Գրականագէտ Արքմենիկ Նիկողոսեանը գրելով Վարդան Յակոբեանի «Քրիստո- սի ծաղիկները» ասքի մասին, կարեւոր շեշտադրում է անում. «Երբ բանաստեղծի խօսքի կարելիութիւնները առանձին թուարկելու չափ անհնարին բազմազան են, երբ բանաստեղ- ծութեան դրսեւորման ձեւերը ներառում են յայտնի ու անյայտ գրեթէ բոլոր պոետիկական հնարները, երբ ասելիքը ձգտում է ընդգրկել ասուած ու չասուած ամէն ինչ եւ անընդհատ բեռնաւորուելով նոր լիցքերով, ապա անպայման գրում, նոյնիսկ կարելի է ասել՝ ինքնագըր- ւում-ինքնաստեղծւում է մի գործ, որ յաւակնում է այդ ամէնի հանրագումար-ամբողջութիւ- նը լինել։ Գործ ունենք թէ՛ ձեւով, թէ՛ բովանդակութեամբ չափազանց ինքնատիպ մի ստեղ- ծագործութեան հետ, որի արժէքը յատկապէս պատերազմական թեմայով գրուած վերջին տարիների ստեղծագործական ձեռքբերումների համապատկերներին էլ աւելի ակնառու է դառնում»։

Դար ու դարեր գնում ենք մինչպ և մինչպ չենք հասնում,
բայց կանգ չենք առնում ոչ մի անգամ,
քանզի հաւատում ենք, որ հասնելու ենք:
Թէկուզ գնում ենք մինչպ և մինչպ չենք հասնում[7]:

Մարդու ինքնաբացայայտումը եւ ժամանակի անդառնալիութիւնը հեղինակն ամե- նատարբեր հնարքներով է արտացոլում իր տողերում։ Արդարեւ, զգացածի ու արարա- ծի արդիւնքը կարող է գոհացնել ընթերցողին, եթէ վերջինս իմանայ, թէ ինչի համար է բացում եւ կարդում, եւ ինչ է ուզում ստանալ Քրիստոսի ծաղիկներից. հայրենասի- րութեան իրական դա՞ս, թէ՞ ազատամարտի բովանդակալի գաղափարախօսութիւն՝ գրական բարձունքներին հասած։

Վ. Յակոբեանը տեղի ու ժամանակի առումով չուշացող ու միշտ ժամանակին տող հիւսող գրող է, որ կլանում է ժողովրդականութեան գրականութեան բազմաթիւ շեր- տեր եւ խտացնում այն ամէնն, ինչը իսկապէս բարձրաձայն ասելու եւ կաղապարուած կոնտեքստից դուրս հանելու կարիք ունի։

Իսկ Ավոն, ահա, Մելքոնեան Մոնթէն,
զաւակների հեպ երկրի
պնպղում է ափի մէջ փրեզերական
փոշին ապրղապեծ՝
վերագպնելու

[6] Նոյն տեղում, էջ 291:

[7] Նոյն տեղում, էջ 302:

առասպելները հինաւուրց հողի՝
իրեն իսկ պատկերով,
դեռեւս չքանդակուած ոչ արծաթէ,
առաւել ևս՝ ոչ ոսկէ
մեծաղաղրամի վրայ։
Խաչենագետի կամրջից մօտիկ, ուր որ ջրի մէջ
Ոսկէ ձկնիկն է ապրում,
գետն է մտել Շոպենհաուերը,
և ուշանում է և, ուշանում է՝ այս էլ քանի տարի,
և դուրս չի գալիս՝ աշխարհը իր կամքն է.
իսկ ջրի ճողփիւնը «մետաֆիզիկական
շեմին» յայտնուած
լիրիկների ոտքերի տակ փշրուող ափսէների
ձայն է յիշեցնում։
Գետը մէկ կորչում է ժայռուտներում ահարկու,
մէկ աչքերեւ է դառնում՝ մէջքին
մէկընդմեջ փայլեցնելով
ափքարի մէջ խրուած ժայռ մի՝
վրիպուած նետի։
Ինչ վերաբերում է Էլիոթին, նստել է, ասում են,
սուրբ կենդանու մէջքին
և Վաշինգտոնից թէ Լոնդոնից ճանապարհ ընկել
ուղիղ դէպի Ղարաբաղ։
Սև սամումը եղեռնական մոլեգնում է Արցախայ սուրբ լեռների մէջ։
Իւրաքանչիւր վայրկեան, որ նոր է գալիս,
մեզ տխրեցնում է
առաւել,
քանզի աւելի խորն ենք ապրում նախորդ վայրկեանի
ողբերգութիւնը[8]*։*

Մեր պատկերացումներում իւրաքանչիւր հերոսական արարք, եթէ փառաբանւում է, ապա այն մշտարթուն իրողութեան նման յաւերժ այցի է գալիս ու ինչ-որ չափով գաղտնիքի մէջ կամ գաղտնիքից դուրս շարունակուող կերպարների է հանդիպում։ Իսկ շարունակուող յաղթական կերպարի անունը օգտագործելը աւելի է հարստացնում տողերի հմայքն ու նոր բովանդակութիւն հաղորդում գրողի այն ստեղծածին, որը թերեւս ընդգրկում է մեր բազմադարեայ կենսագրութիւնը՝ առանց ընդհատումների։ Հաւաքական համաստեղութիւնների լայն ընդգրկումը թոյլ է տալիս ներկապնակի բոլոր գոյներին ծանօթանալ եւ չկենտրոնանալ միայն սեւ ու սպիտակի վրայ։ Նկարագրածս հէնց Վ. Յակոբեանի բացայայտած գալիք հրաւէրքն է ու դադարները՝ կտրուկ շրջադարձներով։ Դրանք լաւագոյնս են ներկայացնում մեր պատմութեան անաղարտ ընթացքը, որը գրողի ներկապնակում աւելի գունեղ է, քան մեր պատկերացրած աշխարհում։

[8] Նոյն տեղում, էջ 302-303:

«Ճանապարհը յուշարար է: Ճանապարհը ասում է՝ դուք չէք գնում, երբ հեռանում էք: Ինչպէս կարող էք ձեր սիրտը դէն նետել, մի կողմ թողնել ապրած օրերի յուշը, ծննդավայրի առաջին սիրոյ ճամբան, ձեր հարազատների շիրիմների վրայ վեր ու վար ճախրող հրեշտակներին ու հեռանալ, սփիւռուել: Դուք պարզապէս մասնատում էք ձեզ, բաժան-բաժան էք անում, քաղցրութեամբ դիւթող թոյնի թմբիրներով տրւում էք թուացեալ «դրախտին» ու անարթնանալի, անարթնանալի մշուշով խորը քնում էք: Դուք չէք գնում, երբ որ գնում էք»,- *կարդում ենք ասքում։*

Հեղինակի մտահոգութիւնն ու պարզ բացատրելու ունակութիւնը ընթերցողը կարող է հասկանալ այս տողերի միջոցով, քանի որ ամէնքս առնչւում ենք այս երեւոյթի հետ։ Ճանապարհի դժուարին ընթացը, կամ ինչպէս ինքը՝ հեղինակն է ասում՝ յուշարար ճանապարհը, ասում է, որ մենք չենք գնում, երբ հեռանում ենք։ Իսկ իրականութիւնից ու պարզապէս մեզ շրջապատող երեւոյթներից հեռանալ պէտք չէ։ Հեղինակը այստեղ նաեւ շատ յստակ շեշտադրում է անում՝ յուշում սիրոյ ճամբան, հարազատների շիրիմների վրայ վեր ու վար ճախրող հրեշտակներին համադրութեան մէջ դնելով։ Հայի հաւաքական դիմագիծը գրողի գրչով նոր պոռթկումներ է անում՝ կեցուածք ու միասնական նպատակ ձեւաւորելով, յարատեւութեան ջահը վառ պահելով ու առաջ տանելով։

«Էս կոիւը մեր կոիւն է, հեռու երկրներում չէ, օտար աշխարհներում չէ, մեր հանդում է, մեր տանն է. եռանկիւն, կնքուած չեն գալիս նամակները, մի կտոր թղթի վրայ հասնում են, երբեմն՝ ժամանակին, զինուորն է բերում, հետն էլ «ոնց էք, ոնց չէք»-ը լրացուցիչ գուրգուրանքներով, գիւղի մարդկանց հին ու նոր յուշապատումներով: Շատ յաճախ նամակի կարիք էլ չի լինում: Դիրքերը հեռու չեն: Գիւղացիք հերթով հաց են տանում: Յասմիկ հարսը մի օր էլ զինուորական զգեստներ հագաւ, թէ՝ էս անգամ տղերանց համար ես հաց կը տանեմ: Ոչ ոք չառարկեց: Յակոբը զարմանքից ու ուրախութիւնից չգիտէր, ինչ ասեր: Դիրքի տղերքը հասկացան՝ եօթ ամսուայ պսակուածներ են, ասին՝ Յակոբ, ոչինչ, մի քիչ զրուցէք: Յակոբը տեսաւ, որ Յասմիկը կարմրեց: Չկարողացաւ հրաժարուել: Սարի վրայ վանք կայ, մի քանի մոմ վառեցին, համբուրեցին պատերը, յետոյ կտուց կտցի մեծ կաղնու տակ զրուցեցին: Նրանց համբուրուելը, իրարից կարօտ առնելն Աստծոյ սրտովն էլ էր: Վանքի խաչի ստուերը ձգուել, ընկել էր նրանց վրայ, դրա համար էլ, երբ ծնուեց առաջնեկ տղան, անունը դրին Խաչիկ: Կռիւները շարունակւում են:

Խաչիկը հիմա, արդէն ինը տարեկան քաջորդի է: «Տղաս զինուոր է ծնուել, թող զինուոր էլ մեծանայ, յետոյ, որ խաղաղութիւն լինի, յետոյ, հեշտ է այն ժամանակ»: Հայի «յետոն» տեսնես ե՞րբ կը գայ:

Ալաւերդունց Օսէփը հեռու էր ե՛ւ «հակայ», ե՛ւ հակայ «հակայ» լինելուց, բայց ոնց իրեն ձեռ էր տալիս, այնպէս շրջում-բերում, նրան էլ էին այս կամ այն ափում յայտնաբերում: Շրջկենտրոնից վերադառնալիս, ասացին՝ Ստալինի կիսանդրին տար գիւղի գրադարանին յանձնիր: Մարդ էր, վերցրեց ու բերեց: Բայց էշի բեռը ծանր էր, ճամբին ծռուեց, մարդը չուզեց քար դնել՝ աւելո՛ւրդ ծանրութիւն ստեղծել: Օսէփը բեռը ուղղելու համար, թեթեւ հակից կախեց արձանիկը՝ պարանը օղեփոկ արեց, նեղ մասը վիզն էր, հագցրեց ու եկաւ, մտաւ գիւղ՝ առանց որեւէ յետին մտքի ու «հակայ»-ի: Բայց արձանիկին սրտատրոփ սպասող Նուրվարդը, որ տեսաւ Ստալինի այդ վիճակը, ուշից գնաց: Յետոյ նրան ուշագնացութեան համար շրջանային հիւանդանոցում գովասանագիր տուին, իսկ ուշագնացութեան պատճառի համար Օսէփին բանտ նստեցրին: Վերջինս ինչքան փորձում էր Ջառունց գժերի հետ ազգակցական կապ գտնել՝ ազատուելու համար, չկարողացաւ: Իր խաչը տարաւ մինչեւ վերջ: Ծանր

էր»[9]:

Ընթերցողը պատկերացնում է տրամաբանօրէն՝ մտովի հաւաքելով, միացնելով նոյն նպատակի համար միասնաբար ոտքի ելած մարդկանց բազմութիւնը։ Այն բազմութիւնը, որ կռիւը համարում է ազատութեան միակ ելքը, քանզի հայի ազատատենչութիւնը չի չափւում մեթրերով կամ քիլոմեթրերով։ Այդ ազատատենչ ոգին Վարդան Յակոբեանը իրեն իւրայատուկ հանգստութեամբ չափեց բառով ու բառի մէջ տեղաւորեց եւ հաւատ, եւ ձգտում, եւ վերջնական ու շարունակուող կեանքի լուծումներ։ Լուծումներ, որոնք բովանդակային առումով հարուստ են, ունեն կարեւոր կէտեր, առանձնանում են իրենց համաչափութեամբ ու նուրբ արուեստային երանգաւորմամբ։

«Քրիստոսի ծաղիկները» նրանք են, ովքեր իրենց անունը փառքով ու լոյսերով պսակեցին, չերկմտեցին հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործը կատարելիս, եղան հողի իրական տէրն ու տիրակալը՝ գրկելով այդքան աստղաւորուած հողը։ Եւ ինչպէս Վ. Յակոբեանն է գրել՝ հողը դառնում է զարմանալի բուրիչ ու անդաւաճան։

Տարիների հեռուից թէկուզ դժուար ու ցաւոտ է թւում խօսել այն եղածի մասին, որը շատ անգամ մարդու ներսն է խառնում՝ կարեւորն առանձնացնելով երկրորդականից ու, որ ամենակարեւորն է՝ տողը դարձնելով նախահիմքը այն ամէնի, ինչը մեզ յաճախ է տանջում ու հարցեր առաջացնում, որոնք եւ անպատասխան չթողնելու համար պէտք է զգուշօրէն ընկալենք անխուսափելի կեանքի օրէնքները։ Այդ օրէնքների մէջ նաեւ յանուն հող հայրենիի պայքարն է, արդա՜ր պայքարը։

«Ամէն երգող ինքն իր վրայ լաց է լինում։ Իսկ ինչ բառերով ասում է՝ չի ասում, աղաւաղում է։ Եւ դեռ ոչինչ չի ասուել աշխարհում»[10]:

Ասքն աւարտւում է «Շրջանակից դուրս» ենթավերնագրով՝ հէնց այս տողերով, որոնք կրկին իրականութիւնն են ներկայացնում՝ բացառելով աշխարհի կեղտոտ խաղերը։ Այո՜, դեռ ոչինչ չի ասուել աշխարհում։

ՎՈՎԱ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ



[9] Նոյն տեղում, էջ 307-308:

[10] Նոյն տեղում, էջ 379: